


13205

huy.



2069
Բ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
բաֆեսնի եւ Մարտիրոս Յովհաննիսնանի.

ԱԼԻՍԳԻԾ

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ


ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ռ. ՏՊԱՆ. Խ. ԴՐՈՒՅԹԻՆ

13205

Գ թ ե 3

Արևել վարդ. Ղևիան
հղաւաբանութեան զոկոոր.



13205

ՀԱԳՈՒ
Ը «Տրուդ» Ս. Գ. Բեկրադին
1917



13205

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

1.

1906 թւի յունաբին եղաւ ներկայ մեր գործի տպաչին հրատարակութիւնը, որ, ինչուէս մննը էլ խոստավագնել ենք, թերութիւններ ուներ: Երկրորդ հրատարակութեան մէջ կաշխատենք այդ թերութիւններից խուսափել, ելակեր ունենալով այն հանգամանքը, որ ազատ պետութեան մէջ ազգային-եկեղեցական կեսնքը չի կարող կաշխանդել:

Եկեղեցին խղճի գործ է, ու իբր այդիսին, նա ազատ պիտի լինի նոցա համար, որոնք կուղենան համախմբւել նբա չսրբջը: Եկեղեցին իբր մի հիմնարկութիւն, չի կարող անկերպարան լինել, որքան և նա ազատ լինի: Ենա այդ կազմակերպութիւնը մենք անւանում են ազգային-եկեղեցական միութիւն, որ ունենալու է իր մարմնները:

Այդպիսի մարմիններ են 1) Ազգային ժողով և կենցրանական խորհուրդ, 2) Թիմական ժողով և թիմական խորհուրդ, 3) Գուտառական ժողով և զաւառական խորհուրդ, 4) Նխական համայնք և ծխական հոգարձութիւն: Ազգային ժողովի և կենցրանական խորհուրդի մէջ մանում է եկեղեցու հոգեսր զլուխը՝ Կաթուղիկոսը, թիմական ժողովի և խորհուրդի մէջ թիմական առաջնորդը, զաւառականի մէջ՝ առաջնորդական փոխանորդը, եթէ կայ

այդպիսին, ծխական հոգաբարձութիւնը աշխարհիկ է: Այս կազմակերպութիւնը պատմական գարաւը անցեալ ունի:

Կաթողիկոսն, իբր ընտառվի պաշտօնիայ, զործում է ազգային եկեղեցական սահմանադրութեան հիմունքներով: Նոյն է և թիմերում առաջնորդների մասին: Ել չեմ տառում վնասակար և բիբոկրատիկ այն հիմնարկութիւնների մասին, որ Սբիոկ և Կոնսիստորիայ են կաշտում: Այդեղ կենդանարար ոչինչ չէք տեսնի, այլ միայն ձև և մեռած տառ: Փողովրդի տառաջ հոգեսր իշխանութիւնն տմենից շատ վարկարեկել է այդ հիմնարկութիւնների պատճառով: Այդ բոլորին պիտի վերջ տալ: Այդ հիմնարկութիւնները պէտք է ստանան ազգային ընոյթ և գործին՝ ընտրովի մարդկանցով:

Սզգային եկեղեցական կազմակերպութիւնն արգէն պատրաստի ինստիտուտէ, պէտք է նրանից օգտιել, նրան բոլորովին ազգայնացնել և աշխաթհականացնել, որպէսզի նրա զուտ աշխարհիկ գառնալն արգէն ժամանակի ինդիր լինի: Ազգային եկեղեցական համայնական-ծխական կազմակերպութիւնը իր մանր միտուստական սկզբունքով գեղմոկրտատիկ մի կազմակերպութիւն է, նա պէտք է գառնայ միր ապաղայ քաղաքական կազմակերպութեան հիմքը: Այդ մանր աւտոնում համայնական մարմիններն այժմ իբր ծխական համայնք, իբրար միացած՝ պիտի կազմին գտաւական ապաղայ կազմակերպութեան հիմքը: Այդ մանր աւտոնում համայնական մարմիններն այժմ իբր ծխական համայնք, ապա և նոհանգական-թեմական և ապա համազային կենդանական միտութիւն:

Ցաւելսվ կարելի է յիշել, որ ողազութեան այս օրեւմ, էջմիածնի հրապարակած «Թեմական ժողովների ժամանակաւոր հրահանճ»-ը պարզ ապացոյցներ է տալիս, որ այդ չքահանգը կազմովները բաւականչափ պարզ ըմբռնողութիւն չունին ոչ միայն միր ազգային համայնական-թեմային կազմակերպութեան ընոյթի առ նա և ժա-

մանակիս ոգու և պահանջների մասին: Այդ չքահանգով ժողովրդի իրաւունքն իր առաջնորդ ընտրելու զործում հասցնուում է ամենացածր չափերի, առաջ բաշելով առաջնորդական քառական սահմանուն մի ցանկ: Այդ ձեն ստեղծել էր ցարիզմը, նոյն ձեն ուզում են պահել թէս «Ժամանակաւոր», նաև այժմ: Թեմբ ընտրում է միայն մի առաջնորդ, բնեարկում է շարերին, ամենից շատ բարեկարգ առաջնորդութեան կոչուղին Կարուղիկոսը պէտք է միայն ընդունել:

Այսուղի մենք ակնարկեցինք այդ էջմիածնեան Հրանանգի միայն այդ զիստաւոր պակասութիւնը: Դա որոշ մտայնութեան և հոգեկան որոշ աշխարհի արդինքն է: Այսուղի, իշարկէ, տեղ չէ կանգ առնել այդ չքահանգի այլ պակասութեան վրա, բայց չիմ էլ կարող շառել, որ այս օրերում էջմիածնի անունով այդպիսի մի անմշալ և անկատար զործ հրապարակ նետելի ինձ ցատ պատճուից: Ամեն մարդ ամեն բան հասկանալ չի կարող, զրա համար էլ, այդպիսի մի զործի պիտի հրաւիրէին մտանազիքառական կրթութիւն ունեցողները: Մեզ թւում է, թէ թիմական ժողովներն առաջնորդական ընդութեան այդ անտեղի և ազգային աւանդական կարգերը ժխտող, ընտրի մենքի ցուցակի հաստատման ձեզ կտրուկ կմերժեն, և կընտրին մի առաջնորդ:

2.

Նախինթացի մէջ մէնք յաճախ գործածեցին ազգային միաթիւն, չամազգային ժողով և այլն բաներ, որոնք կարող են, անբացարելի մնալով, մեր միաքը չպարդի և թիւր հասկացողութիւնների տեղիք տալ:

Այս նախազիծ վերաբերում է միայն ուստահայերին, ուստի և նա համազգային ընոյթ չունի և չի կարող համարութիւն ունենալ ուստահայերի: Ուն մասմիններու և իննե-

զբանական ժողով և խորհուրդ, թեմական ժողով և խորհուրդ, և այն—որ սահմանելու են սուսահայերի համար սուսահայերի սահմանագիր ժողովի կողմից, դարձագիր են միայն մեզ համար: Թիւրքիայ հայերն ունեն իրենց ազգահն սահմանագրութիւնը, ճիշտ է, նո խիստ գեմոկրատիք կառուցածք չէ, բայց այնուամենայինիւ մի բան է, մի լաւ սկիզբն: Ինչ իրաւունքով որ մենք մեզ համար կարող ենք սահմանել, նոյն իրաւունքով էլ նոքա պէտք է օրինագրեն իրենց համար: Նոյնն է և պարսկահայերի, ամերիկահայերի և այլ երկրներում գանւածների նկատմամբ:

Այն, ինչ կարսղ ենք մենք իրացնել մեզ համար, և թոյլատրելի է մեր պետական օրէնքներով, զա կարող է ընդունելի չլինի հայկական մի այլ հատւոծի տէրութեան հիմնական օրէնքներով: Սրանից պարզ է, մեր ամեն հատւոծ պիտի և կարող է ունենալ իր ներքին տառնում իրարից տարրեր կարգեր և սահմանադրութիւն:

Մենք համագոյին բնոյթ իրող միայն մի հիմնարկութիւն ունինք, զա եկեղեցու միաթիւնն է, որ մարմնաւորում է հայրապետութեան մէջ: Մեր Կաթոլիկոսը, այդ տեսակետից, մի ներքին կամ ձեական կապն է հայկական բոլոր հարւածների համար:

Մենք պիտի ուժ տանք այդ կատին, նրա շուրջն առաջ պիտի բերենք մի համագոյին մարմին, ուր մասն պիտի ունենան հայ բոլոր հատւածների ներկայիչները: Դա տարբեր կլինի եջմիածնի կենդրուական խորհրդից ու նրանից բարձր: Մենք ուժ պիտի տանք Հայրապետութեանը մինչի այն ժամանակի, երբ արդէն հնարաւոր կլինի համագոյին զուտ աշխարհիկ մի մարմին և ազգի ներկայացուցական մի հեղինակաւոր ինստիտուտի առաջ գտը: Քանի մենք այդ չափենք, աշխատելով հարդէ, որ այդ ձեռք բերենք, օգտինք պատմական աւանդներով

մեզ հասած ու այժմ գործող այդ կապից՝ Հայրապետի ներկայաշական ֆունկցիաներից: 2ի կարելի տաել, որ զարկալ հիմունքներ չունի իր մէջ. միայն թէ այդ համագոյին բնոյթ ունեցող ինստիտուտը զնել ասողը պայմանների մէջ, որոշ շրջանակում, առանց անձնական հայեցողութեան անդենցների:

Կատարւելիք գործողութիւնների և ձեռնարկութիւնների բավանդակութիւնը պիտի լինի ազգի կամքը, Կաթողիկոսը պիտի լինի ազգի կամքի և ցանկութիւնների արտայայտիչը: Ազգի կամքը թելազող այդ մարմինը մենք ենթագրում ենք այսպէս.—Թիւրքիայի հայերն ընարսում են Յ, Ռուսահայերը Յ անձն. և պարսկահայերից 1-ը. այդ անձեւը կարսղ են լինել այնտեղի և այստեղի կենդրուական խորհուրդների անդամներից: Եսկ եթէ հնար լինի մի համագոյին ժողով գումարել, ու այդ ժողովով ընտրել առաջ համագոյին կենդրուական վարչից խորհուրդը, զա կլինէր ամենաացանկալին:

Յամինայն գէպս, պետք է անսպատասիանատու խըմբակցութիւնների և անհամանների գործունէութեանը վերջ տալ:

3.

Չատ տուարկութիւն կարող է վերցնել կենդրունիք խնդիրը: Եթէ պատմականը նշանակութիւն ունենայ՝ այն ժամանակ ազգային կենդրուական խորհուրդը պիտի լինի եջմիածնում. եթէ մտաւոր կենդրու պիտի վերցնի իրը չափ, հապա գերակշռութիւնը Թիֆլիսի կողմն է, իսկ եթէ աշխարհագրական դիրքն է լինդիրը լուծողը, այն ժամանակ տաւեկութիւնը Երևանինն է: Ես նախապատութիւնը կտայի եջմիածնին, յօդուա զրա խօսում է պատմական անցկալը: Այս խնդիրը լուծողը կենդրուական եղկարգ ժողովն է, որին և պէտք է սպասել:

Նախագծիս մէջ չէ յիշած, թէ կենդրունական խորհուրդը ինչպէս պիտի գործէ, խնդիրը վերաբերում է, ի հարկէ, նրա պարբերական գործարումներին: Եզդ կարեոր կէտք պիտի սրոշէ կենդրունական ժողովը, որ միաժամանակ և լինելու է սահմանադիրը:

Ամուսնական խնդիրները մենք կանոնների ենք վերածել, հիմք ունենալով մեր ազգային ժողովների կանոնները—Զահապեկանի (447 թի) Պարտաւի (768 թի): Անկառած է, որ այդ խնդիրները քաղաքացիական համապետական իրաւունքին են վերաբերում, այնուղեալ իրենց ձեռաւորութիւնը կսահմանա: Քանի դեռ այդ շկայ, քանի գեռ պսակն եկիցեցական է, ուստի և անհրաժեշտ է զրանց կարգաւորութիւնը. վերջ պէտք է տալ այն ողբալի, հակասական, անձնական հայեցողութեամբ այդ խնդիրները անօրինելու բոլոր ձեերին և տիրապետող զրութեանը:

Այս նախագիծն, անշուշթ, պակասութիւներ շատ ունի, զրա համար էլ ոս միայն նախագիծ է, անհատական ենթագրութիւնների և մառումների ծնունդ: Զատ ուրախ կլինեմ, որ կենդրունական ժողովը կարողանար մշակիլ մի շատ աւելի կատարեալ գործ, ու մեր համայնական խնդիրները լուծելու աւելի լաւ մի ներքին կանոնադրութիւն:

4.

Խոսելով ընալութեան մասին, չենք ասել, թէ առջնորդութեան և փոխանորդութեան թեկնածուներ ովքեր կարող են լինել: Բայց մենք ենթագրում ենք, որ ոչ մի արգելք չկայ և չպիտի լինի, եթէ ժողովով ընդութեամբ արժանաւոր քահանաներ առաջնորդութեան և փոխանորդութեան պաշտօնների կոչին: Այլ կերպ ասած, վարչական պաշտօնները կուտակոն հոգեստականութեան

մօնոպոլիան չպիտի լինի: Այս նախագծի մէջ տեղ չէր կարող բանել նա և մի շատ կարեսը խնդիրը. դա այլը բահանականէր ամսուսնանալու խնդիրն է: Եթի 1906 թւին մամուլի մէջ առաջին անգամ այս տողերը պրոցը հարց բարձրացնեց և այդ խնդիրի լուծման կանոնական կարգերի մի համառօտ ուսումնաօիրութիւն աւեց, այսուհետեւ շարք զիմումներ եղան Խրիմեան Հայրիկին: 1907 թւին ուղեցան մի ելք գտնել, ու փոխանակ ուղիղ ճանապարհ ընտրելու, գիմեցին խնդրի լուծման մի միջոցէ, որ հենց իր մէջ պարաւնակամ էր մերժման առաջնվայրինը: Դիմումն եղաւ առաջնորդների, պատրիարքների, կրօնական ժողովի ուր գերակշռում են կուտակոնները, և հարցումն, թէ արդիօք թոյլատքին է այրի քահանաների ամսուսնանալը: Հարցն ուղղաւ է ամսուսնաթիւնը Ժիառզ հիմնարկուներկութիւններին—եղիսկոպոսների, վարդապետների, որոնք պատասխանեցին «աշ»:

Այսեղ նա և յիշելու է, որ պէտք է լուծել զգեստի խնդիրը: Հոգեստականի ներկայ զգեստը անելու է պաշտօնական միայն եկեղեցում հաղնիլու:

Կարեսը է նա և ծէսելը կրծտաելու խնդիրը և պարաւորական ժամանացութիւնը՝ շարաթ երեկոյեան, կիրակի առաւոտեան և ճաշին անելով սահմանափակել:

5.

Առանց յետին մոքերի, հարկադրւած եմ նաև մի շարք խորհրդածավթիւններ անել, ելակէտ ունենալով այն իմաստութեան, թէ «հեմարտութիւնը ամենից քարձ»:

Նախ այն հակասութիւնը, որ կայ Հայրապետական ապրիլի 7-ի կոնդակի և նրա հետ ուղղաւ «ժամանակաւոր հրահանողի» մէջ:

Այսուահետո առաջ է առել և պահան եկեղեցւու պահան

նրա ազատաբար պատմական ձևերին, որ գրւանի տակ էր գրւել արտաքին ճնշող հանգամանքների չնորհիւ, հրահանգը հիմնապէս հաւկասելով և ժխտելով հայրապետական Կոնդակին նոր, աւելի կաշկանզող ձևեր է սահմանում առաջնօրդական ընտրութեան գործում:

Մինչ Կոնդակն իմաստութեամբ ուզում է կեանքի մեջ վերակենդանացնել ժողովրդի ազատ անկաշկանդ կամքը՝ իր գործերը անօրինելիս: Ժամանակաւոր հրահանգ կազմովները, երեք այն մոլար կարծիքի են, կամ այն երջանիկ ինքնուտարեցութեան մէջ, որ եթէ օտար գրւանը ներկին ազգային գայներով, ու նրան մկրտին հայութեան աւագանում, զա արգէն բաւական է: Մինչ գեւ խնդիրը անոնը փոխելու մէջը չէ, ազգային անոնն և գոյնը չեն կարող հմայք տալ գրւանին, նա միշտ էլ ճըշշման և միահինգ անութեան էմբլէմն է, ահա զա է էտականը, զա պիտի հաւականալ:

Թէ չէ կոնդակը ազատութեան մասին է խօսում, հրահանգն այդ ազագութիւնը զնում է միասկետական խխու շեշտած նեղ շրջանակի մէջ:

Երկրորդ.—Պատմութիւնը գրւում է վաւերագրերով: Ինչքան էլ էջմիածնում չսիրեն Խրիմեան Հայրիկին և ժողովրդական ու ազնիւ եղմիբուժանին, այդ մեր լաւագոյն Կաթողիկոսներից երկուսին, այնու ամենայնիւ նորա, որոնք խմբագրել են ապրիլի 7-ի հայրապետական կոնդակը, և ժամանակաւոր հրահանգը—այսինքն պիւանն ու նրա խորհրդակիցները, Խրիմեանի և Խմբիբուժանի պիւանները պատմական անձնաւորութեամբ, զա համար պատասխանաւու է և ընդադարձակի՞ վարչութիւնը և ոչ զլույը: Ցարիկի ժամանակաւոր պատշաճաւոր ստորագրութեամբ, զա համար պատասխանաւու է և ընդադարձակի՞ վարչութիւնը և ոչ զլույը:

Ցւել կարելի է և խորտավէս վշատնալ, որ մոռաց ման են աւել Խրիմեան Հայրիկի 1906 թւին աւած կոնդակը, որի մէջ հայ ժողովուրդը կոչւում էր «Տէր ու Տնօւեկ» լինելու իր գործերին: Եւ զա, զիտէք, ցարիկի ժամանական ձևութեամբ:

մանակ էր, մոռանում են, որ Խրիմեանն առաջին անգամ՝ ի կեանս կոչեց թեմական ժողովներն ու խորհրդագները, որ նրա ժամանակ ասածին անգամ առաջնորդական պաշտօնների ընդունութիւնում հիմքը գրւեց: Մոռանում են, որ Խմբիբուժանի օրու գործում էին թեմական ժողովներն ու խորհրդագները, որ եղմիբուժանն էր Ստոլիափինի զէմ ժարաւում իր ժողովրդի իրաւունքների համար, թեմական խորհրդագների, եկեղեցու մէջ ընարական ոկրտունքի լայն կիրառութեան համար: Արդ, այդ բալրից յետոյ ինչպէս կարելի է մի պատմական ակտ հրատարակել, առանց նախընթաց մօտ ժամանակաւոյ պատմական արգէն գէպքերին արժանաւոր հարկ տալու: Կոնդակ գրողները պէտք է զիանային, որ նոր կոնդակն աւելի արծէք կունենար, կինը բարեկան աւելի խոր մահացած պատմական մի վաւերագրի, եթէ նրա մէջ արժանաւոր տեղ բռնէն վերջին 10 տարւայ մաքառումների և պատմական ակտերի վերջիշումը:

Պէտք վյանուլ և ՚ի նկատ ունենալ, որ հեռաւոր միաբն անգամ չանինք քննադատելու Հայրապէտին: Մինք վիրցնում ենք խնդիրների արարական, ընդունելով, որ կայ մի դիւնան, մի խորհրդակցութիւն, որ գրւում է Հայրապետական կոնդակներ, կարգագրութիւններ և այլն, և ապա համապատասխան զիկուցմանը անցկացնում: Պակառափարչական ձեւ է, ու այն բոլըն, ինչ գուրս է գտիւ և հրատարակում պատշաճաւոր ստորագրութեամբ, զա համար պատասխանաւու է և ընդադարձակի՞ վարչութիւնը և ոչ զլույը: Ցարիկի ժամանակաւոր կարպի ժամանակ անգամ ծանր քննադատաւոթեան էին ենթարկում կայսեր ստորագրութեամբ զուրս եկած կառափարչական ակտերը: Պարզ է, քննադատաւոթիւնը վերաբերում կատարած ակտին, նրա պիտանիութեանը և վնասակարարութեանը և ոչ պետական ակտ ստորագրագ անձին անձնապէս: Մեր եկակէտն էլ ուս է, մինք քննադատաւում ենք Հայրապետական զիւանը և

նրա շուրջն համախմբւաղ անձանց, ու գանում, որ նրանց վերաբնմունքը դէպի Խրիմեանն ու նամանաւանդ եղմիրլեանը, թշնամական վրէծիոնդրական է զբա համար էլ խիստ զատապարտելի, ու զա բէալ հիմունքներ ունի, առանց զբգապտաճաւների չէ: Բաւական է վերցնենք կենդրոնական ժողովի շուրջն յարուցած պայքարն, ու եղմիրլեանի կաթուղիկոսութեան պատմութիւնը: Դէմքերը, թէ և շտա փոքր, մանր, սակայն շատ պարզ են:

Կարող էինք և ապրելի 7-ի կօնդակի բովանդակութեան, կամ արտայայտութեան ձեերի մտսին դիտողութիւններ անել: Թող ընթերցողը կարդա Խրիմեանի 1906 թւի կոնդակը և համեմատէ պատմական նոր ակտի հետ, սրբան սրարդութիւնն նորատակների մէջ երբ Խրիմեանն ասում է ժողովուրդ Հայոց դու «Տէր և անօլէն» եռ, եկ, ստեղծագործիր:

Խրիմեանն այլ կերպ տոել շէր կարող, և այն մարդիկ, որոնք խմբագրել են այդ կոնդակը, անկախ այն բանից, որ իրենք էլ այլ կերպ չէին կարող մտածել, բայց Խրիմեանին այլ բօվանտակութեան թուղթ շէին էլ համարձակւի ներկայացնել. զբա համար էլ նաև Խրիմեան էր:

Խրիմեանն այլ կերպ շէր կարող, բայց մեր ներկայ Հայրապեաը կարող էր այլ կերպ, բայց սրա համար նրա շուրջը պիտի լինէին այլ մարդիկ, քան նոքա, որոնք կազմում են Գիւտն և նրան կից խորհրդակցութիւն:

Զենք կարող յուռ պայնել նաև մի խիստ կարեսը հանգամանք.—Ապրելի 7-ի կօնդակը առայս է կանանց ընալական իրաւունք, շտա գեղեցիկ: Միթէ դա նոր է. չէ որ Խրիմեանի կոնդակը կայ այդ առթիւ, և այն էլ առաջին անգամ մեր պատմական կեանքում պաշտօնապէս ընդունւած այդ մեծ հայրապեացից. չէ որ կանանց ընտրելու և ընտրելու իրաւունքը նոյն խորդել է մեր

մէջ մի շաբք տարիներ. չէ որ մենք ունեցել ենք նոյն խոկ Թիֆլիսում կին հոգաբարձուներ: Խնչպէս կարելի է այդպիսի խոշոր մի պատմական ակտ մօռանալ, անտես անել: Այդպիսի վերաբերմունք արդէն թոյլաւելի չէ:

25 ապրիլ 1917 թ.

Բագու:

Արևի գարդապետ Պատճեան.

ՆԱԽԱԳԻԾ

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՈւՇՈՆԱԳՐԱԽԹԵԱՆ

Հայ ժողովուրդը Թուսաստանում իր ազգային ծխական գործերը կառավարելու և այդ կազմակերպութիւնը ստհմանելու համար զիմում է պատմական անցեալով որբագրծած ձեւերին; Սահմանադր աէրն ու անօրէնն ազգային ժողովն է, որ ընտրում է ընդհանուր, հաւատոր (երկսեռ), անմիջական և զարդարական քայլարդութեան միջոցով բայց որպէսզի փոքրամանութեան ձայնն էլ ազգային ժողովի մէջ արտայաւի, գրանց պէտք է աւելացնել նաև ընտրական պրօվորցիոնալ ձեր: Այսինքն եթէ 100 ընտրող կայ, 60 հասարակական մի հսուանքի, 20-ը մի և 20-ը մի ուրիշ, ու պիտի ընտրեն 5 պատգամանոր, արդարութեանը պահանջում է, որ մեծամասնականները միայն ստանան Յ մանդատ միայն, իսկ փոքրամանուական իւրաքանչիւր հսուանք՝ մի մի մանդատ:

Երկսեռ ընտրական ժողովուրդի 10—15000 հոգու ընկնում է մի պատգամաւոր: Թիմերը բաժանում են կամ ընտրական շվջանների, կամ նայելով ազգարնակչութեան թիմն, նախարարէս որոշում է իւրաքանչիւր թիմի պատգամաւորի թիւը ու կատարում ընտրաւթիւնը: Ըստ պատգամաւորի կատարում է կամ կուսակցութեանց նախընթաց համաձայնութեամբ կազմաւած թէկնածուների ցուցակով և կամ՝ մանդամները արւում են ընդդրութեան ելքից յիտոյ, երբ տեղերի բաշխումը կատարում է իւրա-

քանչիւր կուսակցութեան ստացած ձայների պլոտօրցիայով: Ի հարկէ, նախապատութիւնը պէտք է առ վերջին ձեւն, որն ելնդունւածն է. ընդդրողների համար պարզ պիտի լինի, որ ընդհանուր, հաւատոր, անմիջական և գաղտնի քէտարկութեան ժամանակութիւնը ժողովով չի լինում, այլ իւրաքանչիւր ընդդրույթ գալիս իր քւէն տալիս ու կնում է: Ժաղավաները, ընդդրական պայքար և պրօվօգանդայ լինում է նախ քան քւէ տալը: 20 տարին լացած իւրաքանչիւր հայ ունի ընդդրելու և ընտրելու իրաւունք:

Ազգային ժողովը գումարելուց յիայց, որ իր առաջին գումարման ժամանակ լինելու է և սահմանագիրը, մենք ենթագրում ենք, որ նա ազգի կամքն արտայացազ հետհետ հիմնենքներն է ընդունելու:—

1. Ազգային ժողով, իրը սուսահայոց ազգային ներկայացութիւն և կենդրոնական խորհուրդ, իրը զործագիր մարմին:

2. Թեմային ժողով կամ նահանգական ժողով, որ ընտրում է թիմի կողմից, և թեմանան խորհուրդ,

3. Գաւառային ժողով և խորհուրդ,

4. Նշանական ժողով և խորհուրդ,

5. Համայնսական-ծխական ժողով և ծխական հագաբարձուրիւն:

Հայ եկեղեցին վայելում է պետութեան բոլոր քրիստոնեայ եկեղեցիների հետ կոյսութեան հաւատոր աղաւատութիւն:

Իր գուտանական, ծխական և հագեր-վարչական խնդիրներում կառավարում է ազգային ժողովների կանոնների համաձայն:

Հայ ժողովը հոգևոր պէտքերի կատարումը գրւում է նրա նւիրապետութեան վրա: Նորապետութեան մէջ իւրաքանչիւր անգամ ընդգանւում է ընտրական հիմները ներով:

Աղքային ժողովը հրատիրում է Ամենայն չայսց չայրապետը կենդրունական խորհրդի նախընթաց որոշման համաձայն:

Հայ հոգևորականները քաղաքական և քրիստոն գործերի համար ենթակայեն մարմնաւոր իշխանութեան դատին:

Վանքերը, եկեղեցիները և եկեղեցական ծխական հաստատութիւններն ունին սեփականութեան իրաւունք պետութեան մէջ ընդհանուր հիմններով:

Հայ աղքայի բայրը հաստատութիւնների շարժական և անշարժ զորքը կազմում է աղքային ընդհանուր սեփականութիւն:

Հայ եկեղեցու հոգևորականութիւնը, այն բոլորի համար, որ վերաբերում է նրա գուտ հոգենոր պարակիքներին, գտնում է միայն իր աղքային իշխանութեան վարչութեան տակ և նրանից կախումն ունի:

Ազգի գործերի ծայրագոյն զեկավարն Ամենայն չայց Կաթուուղիկոսն և ազգային կենդրունական խորհուրդն:

Հայոց եկեղեցու գարաւոր սովորութեան համաձայն, ծայրագոյն պատրիարք կաթուուղիկոսն ընալում է ազգի ներկայիշների ընդհանուր ժողովավ:

Հայրապետի մահից անմիջապէս յետոյ կաթուուղիկոսական տեղակալի նախագահաւութեամբ Էջմիածնիան Կենդրունական խորհրդութիւնը՝ նշանակում նոր ընտրութիւն, որ անդի է ունենում կաթուուղիկոսի մահից չոլս տօխի յետոյ:

Հայրապետի ընտրութիւնը կատարւում է ո. Էջմիածնի Մայր Տաճարում:

Պատգամաւորների ժողովը, ըստ զարաւոր սովորութեան հայ եկեղեցու, ընտրում է միայն մի կաթուուղիկոս, որի մասին հայրապետական տեղակալը պաշտօնապէս հայրգում է այն պետութիւններին, որ հայ թեմեր կան:

Հնարևած կաթուուղիկոսն օծումն ընդունելուց առաջ երգւում է հաւատարիմ մնալ հայաստանեաց եկեղեցու դաւանութեանը, աւանդութիւններին և ժողովներով սահմանւած կանոններին:

Կաթուուղիկոսն եթէ որևէ կերպ դրժի իր երգմանը նու պատասխանաւու է ընալող ազգի տռաջ, որ զատկց յետոյ նրան կարգալոյժ է անում սահմանած կարգով:

Հայրապետին գտափի ենթարկելու համար գումարում է հայ ազգի ներկայիշների արտակարգ ընդհանուր ժողով:

Հայրապետի մահից յետոյ կենդրունական խորհուրդը ցուցադրում է կաթուուղիկոսի անձնութեան գործը, գումարում է ազգային սեփականութիւն:

Էջմիածնի կենդրունական խորհուրդի մասին.

Խուսաց աէրութեան սահմաններում գտնւած հայ ժողովազի ազգային-եկեղեցական բոլոր գործերի ընդհանուր կառավարութիւնը գումարում է Էջմիածնի կենդրունական խորհրդի իրաւուսութեան տակ:

Կենդրունական խորհրդի անդամները, թւով 23 ընտրում են ուսւաստանի 11 հայկական թեմերից 4 տարի ժամանակավ: Այդ թւուի մէջ քաղաքներից Թիֆիֆոն ընտրում է 4, Բագսւ 2, Երևան 1 և Ալէքսանդրապոլի 1 անդամ:

Երարանչիւր միուած կամ հրաժարւած անդամի տնդ ընալուում է, նախ քան ամբողջ խորհրդի կազմի լիով գորութեան ժամանակի լրանալը, նոր անդամ: Ընտրում է այն թեմը, որի ներկայիշը որ է հեռացած անդամը:

Կենդրունական խորհրդին ենթարկուում են ուսւաստաց ազգային եկեղեցական բոլոր գործերը,

Էջմիածնի կենդրանական խորհուրդը գործերի բար-
ուր կառավարութեան համար բաժանում է երեք կոլե-
գիալ խորհրդներ—Ռուսումնարանական, Դատաստանական
և Տնտեսական:

Առանձին խորհուրդների որոշումների և նրանց ան-
դամների գործողութիւնների գէմ բողոքներ արւում են
կենդրանական խորհուրդին:

Կենդրանական խորհրդի որոշումները ներկայացնում
են Ամենայն Հայոց Հայրապետի հաստատութեանը, վեր-
ջինս չհաստատելու տէպքում նոյն խորհրդի վերաբնութեան
և նոյնպիսի վճռի յանդելու դէպքում, կենդրանական խոր-
հրդի որոշումը Հայրապետի համար պարտապիր է:

Կենդրանական և թեմական խորհուրդների անդամ-
ները իրենց պաշտօնի նկատմամբ գործած յանցանքների
համար, որ նախատեսւած են պետական օրէնքներով, են-
թարկում են քաղաքական իշխանութեան դատին:

Թեմական առաջնորդների և խորհուրդների մասին:*)

Պետութեան մէջ հայ ժողովրդի ազգային եկեղեցա-
կան գործերի կառավարութեան համար կազմում է 11
թեմ—Երեսնի, Թիֆլիսի, Ալէքսանդրապոլի, Բագուի, Գան-
ձակի, Ղարսի, Ղարաբաղի, Հիւսիսյին Կովկասի Հաշտար-
խանի, Նոր-Նախիջեանի և Անդրկասպեան երկիրների:

Երեանի թեմին պատկանում են, Երեանի, Նոր-Բա-
յազիանի, Հին-Նախջաւանի, Վաղարշապահի, Սուրբալուի և
Ջալուր-Դարալագիանի գաւառները. Թիֆլիսին՝ Թիվլիսի,

*) Ժամանութիւն.—Առաջնորդական թեմանածու կարող են
լինել ինչպէս եպիսկոպոսներ և վարդապետներ, այնպէս եւ
քահանաներց նոյնն է և փոխանորդների մասին:

Լոռի, Գորի, Սուրբալու, Վարդապետի, Վարդապալակի և
Թելաւի գաւառները, Քութայիսի նահանգը և Բաթում ու
Փօթի քաղաքները. Ալէքսանդրապոլին՝ Ալէքսանդրապոլը
գաւառը Արարանը. Ղարսինը՝ Ղարսի նահանգը, Բագուին՝
Բագուի նահանգը, Լինքօրանի և նույնու գաւառը. Գան-
ձակին՝ Գանձակի, Ղաղախի, Սղնախի գաւառները և Զա-
քաթալայի ըրջանը. Ղարաբաղյնը՝ Ղուչիի, Զիւանչիրի,
Ջիրայիրի, Զանկեզուրի գաւառները. Հիւսիսյին Կովկա-
սին՝ Հիւսիսյին Կովկասը և Սուբիումի ըրջանը, Նոր-Նախ-
ջաւանին՝ Յեղաբարիայի նախկին թեմը և Հաշտարխանի*
Ուսուաստանի արեւելան նահանգները Սիրիքը և Անդր-
կաս-պեան երկիրներ՝ Անդրկասպեան ամբողջ ըրջանը:

Թեմական առաջնորդներին ընտրում է թեմական
ժողովը հինգ տարի ժամանակով:

Ամենայն Հայոց Հայրապետը ընտրւած առաջնորդին
հաստատում և պաշտօնական տեղիկացնում պետական իշ-
խանութեան:

Իւրաքանչիւս թեմ ունի իր թեմական խորհուրդը
10 անդամներով թեմական առաջնորդի նախագահու-
թեմամբ որ ընտրում են նոյն ձեռվ և 4 տարով:

Թեմական խորհրդի իրաւասութեան ենթարկում են
1. առունեական և տառասնալուծական ինդիբների վերջ-
նական լուծամբ. 2. եկեղեցիների բարեկարգութիւնը. 3.
հաստատութիւն ծխական հոգտարձութիւնների, ստորա-
դիր հիմնութեանց ատրիկան հաշիւների և նախահա-
շիւների, 4. ստորագիր հաստատութիւնների գործունէու-
թեան վերահասութիւն, 5. քննութիւն և դատ պաշտօ-
նեաների գէմ բողոքների, 6. հոգացութեան վարչու-
թեան գրողական գործի:

Թեմական խորհուրդները հաշւեառ են էջմ. կին-
դրոնական խորհրդին:

Գաւառային կազմակերպութեան մասին.

Եւրաքանչիւր թէմ բաժանում է 1—3 գաւառների՝ քրենց ծովալով և խորհրդավով:

Գաւառական խորհուրդներին ենթակայ են 1. նախական հայեցազութիւն պաշտօնակաների գէմ բողոքների, 2. ամուսնական հասուչհասի խնդիրների լուծումը, և ամուսնալուծական խնդիրների հախնական քնութիւնը, 3. գործակալների հաստատութիւնը:

Գաւառական խորհուրդը և փոխանորդները ենթարկում են թեմական խորհրդին:

Եւրաքանչիւր փոխանորդութեան մէջ գործում է շրջանի գոլոցների մանկավարժական ժողովի և ծխական հոգարաբձութեան ներկայիշների ժողով:

Շրջանային խորհուրդը վարում է շրջանի գոլոցների բոլոր գործերը:

Աւաների, վաճականների եւ ամուսնաւոր հոգեւորականների մասին:

Վանքի միաբան ընդունում են միաբանութեան ընդհանուր ժողովի նախընթաց համաձայնութեամբ, 21 տարին լրացած անձինք:

Վաճանօր ընտրութիւնը կատարում է միաբանութիւնը, իսկ այն վանքերում առ միաբանութիւն չկայ, վաճանայրերին ընտրում է ո. էջմիածնի միաբանութեան ընդհանուր ժողովը:

Վաճանայրերին հաստատում է պատրիարք կաթուղիկոսը:

Վաճականը զբկում է անշարժ կայք ունենալու իրաւունքից, իսկ իր արգար վաստակով ձեռք բերածը կարող է կտակով բարեգործական և աղջոկաւ հիմնարկու-

թիւնների թողնել: Այն դէպքում եթէ կտակ չէ թողնւած, մեռածի բոլոր կարսողութիւնը հաշւում է սեփականութիւն այն վանքի, որի միաբան որ զրւած է:

Վանքերին կից թոյլ է արւում բանալ կրթական և այլ բարեգործական հաստատութիւններ:

Վանքերը հաշւեառ են թեմական խորհուրդին:

Էջմիածնի վանքը կառավարում է վաճական պատճին կանոնագրութեամբ:

Վանքի գործերի կառավարութեան համար միաբանութեան ընդհանուր ժողովը ընտրում է վաճական խորհուրդ, բաղկացած եօթն անդամից 2 տարսվ. որին ենթարկում են վաճական բոլոր գործերը:

Էջմիածնի վանքը հաշւեառ է էջմիածնական կենդրութեան խորհրդին:

Էջմիածնի վանքի համար կաթուղիկոսը եպիսկոպոսներ է ձեռնազրում միաբանութեան ընդհանուր ժողովի նախընթաց ընտրութեամբ և կենդրունական խորհրդի որոշմամբ:

Էջմիածնի միաբանութեան ընդհանուր ժողովի իրաւունքն է ընտրել վաճանայրեր, Հոփիսիմէի, Գայանէի, Ջողակաթի վանքերի և Զուարթնոց եկեղեցու և աւագ լուսարար Մայր Տաճարի:

Հայաստանեայց եկեղեցու սովորութեան համաձայն ամուսնաւոր հոգեսրականներին ընտրում է ծխականների ընդհանուր ժողովը:

Պաշտօնեաները ապրում են այն եկամուտներով, որ նշանակում է նոցա ծխականների ընդհանուր ժողովը:

Ամուսնաւոր հոգեսրականների կարիքների համար թոյլեարւում իրավանչիւր թեմում հիմնել «հոգեսրականների որբոց և այբեաց հոգարաբձութիւն», փոխատու խնայողական դրամարկղներ և այլն որոնց կանոնագրութիւնը հաստատում է կենդրունական խորհուրդը:

Այդ հիմնաբկութեանց գէմ բողոքները տրւում են
թեմական խորհուրդներին:

Կրթական հաստատուրինների մասին:

Հայադրաւան մանկանց կրթութեան համար բացւում
են ո. էջմիածնում ձեմաբան, իրաքանչիւր թեմում միջ-
նակարգ գպրանոցներ և իրաքանչիւր եկեղեցուն կիծ
ծիական դպրոցներ:

Էջմիածնի ձեմաբանը և գպրանոցները կառավար-
ւում են հաստատած կանոնադրութեամբ և ծրագրով:

Ո. էջմիածնի ձեմաբանը օգտաւոմէ պիտութեան բար-
ձրագոյն գպրացների իրաւունքներով և արտօնութիւննե-
րով: Նոյնի և թեմական դպրոցների համար:

Ձեմաբանը իր ներքին կեանքի խնդիրներում ևս կա-
տարեալ ինքնավար հիմնարկութիւնն է, ենթարկելով մի-
ային կենդրոնական ուսումնական խորհրդի իրաւուսու-
թեանը:

Ընարութիւնը վերտառեաչի և տեսչի և ուսուցչավետ-
ների՝ կախւած է ձեմաբանի կոլլեգիայից և ներկայացւում
ուսումնական փորձքի հաստատութեանը:

Ձեմաբանի վարչութիւնը ամենայն տարի ներկայա-
ցնում է իր հաշիւն ու նախահաշիւր Տնտեսական խորհրդի
հաստատութեանը:

Թեմական գպրանոցի վարչութիւնը բազկացոծ է
հոգաբարձական խորհրդից, վերասեաչից և մանկավարժա-
կան խորհրդից:

Հոգաբարձական խորհրդը բազկացած է 6—12
մանդամից:

Հոգաբարձական խորհրդն ընտրում է թեմական
ժողովից չորս տարի ժամանակով:

Դպրանոցների վարչութիւնները ամենայն տարի ներ-
կայացնում են հաշիւր թեմական խորհրդին:

Եխտական գպրացները կառավարուում են ծխի ընտրած
հոգաբարձութիւններով:

Վանական եւ եկեղեցական գոյնի կառավարութեան
մասին:

Վանական կալւածների ընդհանուր կառավարութիւ-
նը գտնուում է էջմիածնի Տնտեսական խորհրդի ձեռքում:

Վանքերի և նրանց կից հիմնարկութիւնների և ո. էջմիածնի ձեմաբանի նախահաշուր որոշած ծափքերը
լրացնելուց յետոյ, վանական կալւածների եկամուտի մնա-
ցողը գնում է գպրացական և այլ հաստատութիւնների
ծափքերը ծածկելու համար:

I. Պոսկի համար անհրաժեշտ պայմանների եւ արգելվ-
ների մասին:

Թոյլ է տրւում ամուսնանալ հարսնացուին 15 տա-
րեկան և փեսացուին 18 տարեկան, բացանիկ զէպքերում
թոյլ է տրւում մի տարիով պակաս:

Ամուսնանալու իրաւունքից զրկւած են ինելազար-
ները և հոգիկան հիւանդները:

Պոսկի ժամանակ պահանջուում է երկու վկայի ներ-
կայութիւն:

Թոյլ է տրւում ամուսնութիւն 1, կողմնադիծ արե-
նակիցների մէջ հինգերորդ աստիճանում, բացանիկ հան-
գոմանքներում չարտորդ աստիճանում և խորդութեամբ
հանդերձ չորսորդ աստիճանում, 2, ինամիութեան երրորդ

աստիճանում. 3, հոգիսը արենակցութեան երկուսը առափանում: Ըստ այսմ թոյլ է տրում առնել հօրեղբօր թուանը, ինչպէս և բացառիկ գէպքում հօրաքրոջ, քեռու և մօրքրոջ աղջկան, հօրից կամ մօրից խորդ հօրեղբոր, հօրաքրոջ աղջկան, և այլն. 4, երկու եղբայր երկու քրոջ կամ քոյլ ու եղբայր՝ քոյլ ու եղբօր. քինուն, աներսրգու կնոջը հօրից և մօրից խորդ քրոջը և այլն. 5, եղբօր սանիկին, հօր սանիկին, սանտօրը:

II. Ծանուցման մասին.

Իւրաքանչիւր պսակից առաջ լինում է ծանուցումն: Դա լինում է նրանում, որ փեսացուի և հարսնացուի քահանաները իւրաք ետեից երկու կիւրակէ եկեղեցու մէջ յայտարարում են հարսնացուի և փեսացուի իւրաք հետ ամուսնանալու մտադրութեան, ճիշտ կերպով նոցա անունների, հայրանունների, ազգանունների, կոչման, պաշտօնի կամ արհեստի և նոցա ծնողների բնակութեան տեղի մասին: Արտակարգ գէպքերում ծանուցումը լինում է միայն մի անդամ:

Ծանուցումից յետոյ, եթէ բողոքներ չեն յայտնի են թաղրելի պսակի մասին, քահանան պսակում է:

Եթէ ծանուցումից յետոյ պսակի ուշացել է տեղի քան երեք ամիս, նա կօրցնում է իր սյժը. պսակելու համար նոր ծանուցումն են առնելու երկու անգամ:

Ենթագրելի պսակի մասին արգելքներ կարող են յայտնիլ. 1, այն մարդիկ, որոնց համաձայնութիւնը պսա-

կուելու համար պէտք է լինի. 2, այն մարդիկ, որոնք ցանուցման մէջ լիւածներից մեկի կամ միւսի հետ կապւած են նախակին օրէնքով շուծւած պսակով: Կարող են արգելքներ յայտնել նաև կազմնակի մարդիկ:

Այդ տեսակ իւրաքանչիւր յայտարարութիւն կանգ է առնել տալիս ծանուցումին և պսակի ծէսը կատարելուն, մինչեւ որ նա չի ճանաչի միհիմն:

Ծանուցումն գագարեցնողն եթէ մի շաբաթւայ ընթացքում չի ներկայացնի պարզ ապացոյցներ, որ ինը բազոքն արգէն ներկայացրել է շրջանային կամ թեմական խորհուրդներին, քահանան շաբաւնակում է ծանուցումը և կատարում պսակը, եթէ այլ արգելքներ չեն յայտնի:

Եթէ պսակին հակառակողների յայտարարութիւնները անհիմն գուրս կուգան, բողոքը մնում է անհետեամիք, և ինը բառատուն (բացառութեամբ ծնողների և որդեգրողների) նայած պսակին հակառակելուն հետեած հանգամանքներին, կարող է զրա համար պատժել և պսակւողների զրանից առաջացած վնասների հատուցմանը պատապարտել:

Եթէ պսակւել ցանկացողներից մէկն ու մէկը անյայտ են ծխական քահանային, նա պահանջում է պսակւողից բաւարար ապացոյցներ կամ առնւազն երկու արժանահաւատ պատասխանաւութիւնն իրենց վրա առնող վկաների վկայութիւն պսակւողի ծագման մասին, կամ այն մասին թէ նա իրաւոնք ունի պսակւելու թէ ոչ: Եթէ նոքա չեն կարող ներկայացնել այդ տեսակ ապացոյցներ և վկայականներ. նոցա պսակւելու մտադրութեան մասին պէտք է երեք անգամ յայտարարի թեմական համբաւարերի մէջ, նշանակելով երկու ամիս ժամանակ

պոակի դէմ արգելք յայտնելու համար, և յայտաբարելով
ծխական քահանայի անունը բնակութեան տեղը, սրին
նա զիմել է ծանուցումն անելու և պսակելու մասին: Եթէ
նշանակուած երկամսեայ ժամանակոմիջոցում ոչոքի կող-
մից արգելք չի յայտաբարւէ, քահանան կատարում է
պսակը, նախապէս պահանջելով պսակւել ցանկացող իրեն
անձանօթ կողմից զբաւոր յայտնութիւն այն մասին, որ
իր պսակի մասին ոչ մի օրինական արգելք չկայ:

III. Ամուսնալուծութեան մասին.

Այն ամուսնութիւնները որ կապւած են պսակի ան-
թոյլարելի առաջնում կամ բռնի կերպով, ինչպէս և
նախկին օրինական ձևով չուծւած պսակի գոյութեան
ժամանակ, ճանաշւում են անվաւեր:

Ամուսնութիւնը լուծելի է, եթէ ամուսիններից մէկը
անհաւատարիմ է:

Եթէ ամուսիններից մէկը կամայականօրէն տարտկայ-
ում է անյարտ կերպով երեք տարի շարունակ, եթէ ար-
գելք կայ նրա գլխաւոր նպատակին—երեխայ բերելուն
յնտապայ զէպքերում. 1, երբ կողմերից մէկը յամառ կեր-
պով, չնայած ծխական քահանայի յորդուներին, ամբողջ
տարւայ ընթացքում հրաժարւում է ամուսնական պարտա-
ւորութիւններ կտարաբերուց, նրա համար չունենալով բա-
ւարար պատճաններ. 2, երբ կողմերից մէկը դիմամը
տրգելք է լինում յղիանալուն. 3, որ կողմերից մէկը ոչ

թէ իր տարիքի, այլ ուրիշ պատճառներով լիովին անըն-
դունակ է կենակցութեան, և այս (անընդունակութիւնը)
անկարատթիւնը կար մինչի պսակը կամ թէկ առաջ է
եկել նաև յիտոյ, բայց ինքն է մեզաւոր: Այս պատճառով
սակայն, ամուսնալուծութիւն խնդրել թոյլ է արւում՝ ա-
մուսիններինց մէկի ամուսնական կենակցութեան մարմնա-
կան անկարատթեան երեան գալուց երկու տարի յետոյ:

Եթէ կողմերից մէկը վարակւած է անբուժելի վա-
րակիչ և չափազանց զգւելի հիւանդութեամբ, որը նա չու-
նէր, կամ որը նա ծած կում էր մինչի ամուսնանալը:

Կողմերից մէկը խելացնոր է եզել կամ կատաղու-
թիւն է գալիս վրան, և որ մտաւոր ընդունակութիւնների
այդ կարուսալ աեսամ է տապուց աւելի և բժշկի վկայու-
թեամբ առողջանալու յայս չկայ: Այս զէպքամ այն կողմը
որ ամուսնալուծութիւն է պահանջում, պարտաւոր է նա-
խապէս ապահովել տառապոզ կողմի ապրուսաը, եթէ այդ
զերջինը չանի իր սեփական բաւարար կարողութիւն:

Եթէ կողմերից մէկը բոլորսին փշացած վարք ունի,
և մինչի այն աստիճան ենթակայ է արբեցութեան, ան-
միտ վասանելու կամ անբարսյականութեան, որ ամբողջ
կարողութիւնը փշանում է, բայց այն ժամանակ միայն,
երբ նրան ուզգելու համար ձեռք տած բոլոր միջացները
մնում են ապարգիւն:

Վատ վարեկցողութիւնը, միացած հայուանքի, ծե-
ծի կամ այլ զգալի վիրաւորանքների հետ, անմեղ աս-
ուալող կողմին տալիս է ամուսնալուծութեան իրաւանք,
եթէ ամուսներին հաշանցնելու բոլոր ջանքերը և նոյն
իոկ ժամանակաւոր անջատումը կլինին անօգուտ:

1, եթէ կողմերից մէկը չար զիտաւորութեամբ թո-


զել է միւսին և չի համաձայնում վերադառնալ նրա մօտ.
2, եթէ կրնը յամար կերպով հրաժարում է հետեւ իր
ամուսնուն գէպի նրա պաշտօնի և աշխատանքի բնա-
կութեան տեղը. և 3, եթէ ամուսններից մէկը դատա-
պարտած է իրաւոնքներից զրկւելու և աքսորի:


Ամուսնութիւնը լուծիւլուց յետոյ, անմեղ կողմը
իրաւոնք է ստանում նորից ամուսնանալու, իսկ յանցա-
ւոր կողմին, նայելով նրա յանցտարութեան տատիճանին,
կամ բոլորովին թոյլ չի տրում ամուսնանալ, և կամ որոշ՝
ժամանակաւոր պատժից յետոյ¹⁾:



Ժանոթութիւն.

¹⁾ Քանի գեռ որոշ քաղաքացիական գործեր—ամուսնա-
կան, գալոցական և այն եկեղեցու հետ է կապւած, ժողովրդի
մասնակցութիւնն այդ գործերում անհրաժեշտ է, որից պարզ
է, թէ նախադիմս խնդրի ոկզբունքավին լուծումն չէ առաջար-
կում, այլ ժամանակաւոր կարգաւորումն ժողովրդի լայն մի-





ԱՍ Հայագիտական գրադարան



MAL011689

